«Հաստատում եմ»

«Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ԺՊ Ե. Սերոբյան

« 08 » ապրիլի 2021թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ֆրիդա Հմայակի Հակոբյանի <<**Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում**>> խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված է ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ֆրիդա Հմայակի Հակոբյանի <<**Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում**>> թեմայով ատենախոսության արդիականությունը հիմնավորված է, այն պայմանավորված է երկրում, հասարակությունում կրթության, մանկավարժների դերի առավել կարևորմամբ, մանկավարժների մասնագիտական պատրաստման և վերապատրաստման գործընթացների կատարելագործման անհրաժեշտությամբ, կրթության որակի նկատմամբ ներկայացվող ժամանակակից պահանջների, առաջադրված փոփոխությունների հաշվառմամբ, ողջ կյանքի ընթացքում անձի ուսումնառության անհրաժեշտությամբ:

Այսպիսով, ատենախոսը ձեռնամուխ է եղել այնպիսի գիտական հարցի լուծմանը, որը բխում է հասարակության և մանկավարժական գիտության կողմից ներկայացվող պահանջներից և ունի տեսա-կիրառական բնույթի կարևոր նշանակություն:

Ատենախոսության ներածությունում բավականաչափ համոզիչ հիմնավորվում է հիմնախնդրի ուսումնասիրման և դրա լուծման անհրաժեշտությունն արդի պայմաններում, սահմանված է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, ձևակերպված է հետազոտության վարկածը, որն համապատասխանում է

առաջադրված հիմնախնդրին, ձևակերպված են խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, բազան: Ձևակերպված են պաշտպանության ներկայացված չորս դրույթներ, որոնք հիմնավորված են՝ ձևակերպված է հետազոտության գիտական նորույթը, ներկայացված է ատենախոսության տեսա-գործնական նշանակությունը, կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը, որը կրում է <<Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորումն ու զարգացումը շարունակական կրթության համատեքստում>> խորագիրը, բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ հանգամանորեն ներկայացված են մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հայեցակարգային դրույթները, այդ համատեքստում քննարկելով տարբեր գիտնականների կողմից տրված <<ներուժ>>, <<մանկավարժական ներուժ>>, <<մանկավարժական մասնագիտական ներուժ>> եզրույթների սահմանումներն ու մոտեցումները, որոնք ըստ հեղինակի <<□□□փոխլրացնում են իրար>>: Այս գլխում ներկայացված են մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման գործընթացները, տրվում է մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացման բնութագիրը: Իրապես արժեքավոր է հեղինակի այն դիտարկումը, որ մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացումը հիմնվում է շարունակական մասնագիտական կրթության վրա, որը ներառում է մանկավարժի ինքնակրթությունը, ինքնադաստիարակությունը, ինքնազարգացումը, ինքնակատարելագործումը, ինչպես նաև մասնագիտական գործունեության ընթացքում այդ ներուժի գործադրումը: Հետազոտողը տրամաբանորեն դիտարկում և քննարկում է մանկավարժական մասնագիտական ներուժի զարգացման մոտեցումներն ու եղանակները շարունակական կրթության համատեքստում□ մանրամասնորեն ներկայացված են ուսուցիչների արդյունավետ մասնագիտական զարգացման առանձնահատկությունները, արված են վերլուծություններ, որոնց միջոցով հեղինակն անում է ուշագրավ ամփոփումներ:

Ատենախոսության երկրորդ՝ <<Մանկավաժական կրթությունը որպես մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման հիմք>> վերտառությամբ գլխում ատենախոսն ուսումնասիրում և վերլուծում է մանկավարժական կրթության գործառութային շրջանակն ու կազմակերպման մոդելները□ ներկայացնում է

մանկավարժական կրթության նպատակները, գործառույթները, կրթության կառավարման ոլորտում ընդունված մանկավարժական կրթության կազմակերպման երկու՝ զուգահեռ և հաջորդական մոդելները, դրանց կիրառման առանձնահատկությունները: Այս համատեքստում հեղինակն իրավացիորեն քննարկում է մանկավարժական պրակտիկայի դերը մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացներում, կան արժեքավոր դիտարկումներ, կապված՝ մանկավարժական պրակտիկայի ղեկավարներին ներկայացվող պահանջների հստակեցման, ղեկավարների գնահատման, ապագա մանկավարժների կարիքների վերհանման, անհատական պլանների մշակման և այլ գործընթացների հետ: Այս գլխում ատենախոսն ուսումնասիրում և ներկայացնում է մանկավարժական կրթության զարգացման միտումներն ու արդիականացման սկզբունքները ՀՀ կրթության համակարգում և հիմնավորում է տարբեր բաղադրիչների ամբողջական փոխկապվածության անհրաժեշտությունը: Այս գլխում հեղինակն ուսումնասիրում և ներկայացնում է բազմաթիվ հեղինակների աշխատանքներն ու դիտարկումները մանկավարժական կրթության կազմակերպման գործընթացում կոմպետենտային մոտեցման շուրջ, և հիմնավորում է այդ մոտեցմամբ առաջնորդվելու անհրաժեշտությունը մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացում:

Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման գործընթացների առանձնահատկությունների ուսումնասիրությանը Հայաստանի Հանրապետությունում: Այս համատեքստում քննարկվում են մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման հիմնահարցերը կրթության տեղեկատվայնացման գործընթացում□ ուսումնասիրվում և ներկայացվում է ուսուցիչների տեղեկատվական և հաղորդակցական կոմպետենցիաների շրջանակը: Բավականին մանրամասն ուսումնասիրվել և ներկայացվել է մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման իրավանորմատիվային հիմքերը ՀՀ կրթության համակարգում, արված են ՀՀ կրթության համակարգի վերաբերյալ հետաքրքիր վիճակագրական ցուցանիշների վերլուծություններ: Ատենախոսության վերջին ենթագլխում, որը կրում է <<Ուսուցիչների մասանգիտական կրթության և

զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում>> խորագիրը ներկայացված են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցիչների շրջանում իրականացված էլեկտրոնային հարցման արդյունքները, վերհանվել են խնդիրներ և բացահայտվել դրանց լուծման ուղիները: Հարցմանը մասանկցել են ՀՀ հանրակրթական դպրոցների բավականին մեծ թվով ուսուցիչներ, ներկայացված են նրանց անձնական տվյալները, հարցումները վերաբերում են ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությանը, զարգացմանը, գործունեությանը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությանը մասնագիտական մանկավարժական գործունեության ընթացքում, իրականացվել է կրթության ոլորտի իրազեկվածության և կրթության որակից բավարարվածության գնահատում: Ամփոփելով հետազոտության արդյունքները, հետազոտողն առանձնացնում է այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են իրականացնել ՀՀ-ում մանկավարժների մասնագիտական պատրաստման գործընթացներում և մանկավարժության մասնագիտության կրթական ծրագրերում:

Աշխատանքում եզրակացությունները ձևակերպված են առաջադրված խնդիրներին համապատասխան, դրանք հիմնավորված ընդհանրացումներ են և որոշակիացնում են այդ խնդիրների լուծումները:

Հետազոտության ընթացքում ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն:

Ֆրիդա Հմայակի Հակոբյանի <<Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ատենախոսության իրականացման պահանջներին և ունի կարևոր գիտական նշանակություն մանկավարժական գիտության հետագա զարգացման տեսանկյունից: Հետազոտական աշխատանքի վերաբերյալ կան որոշ նկատառումներ.

1. Աշխատանքի առաջին և երրորդ գլուխներում ներկայացված տեսական ուսումնասիրությունները, վերլուծությունները փոքր-ինչ ընդարձակ են:
2. Հետազոտության շրջանակում արված հարցումները կարելի էր ներկայացնել տրամագրերի միջոցով, առավել պատկերավոր վերլուծությունը ներկայացնելու նպատակով:

3. Հիմնախնդրի լուծմանն ուղղված գործողությունների պլանը, ինչպես նաև մանկավարժական մասնագիտական ներուժի գործունեության արդյունավետության ապահովման մոդելը կարելի էր ներկայացնել առանձին ենթագլխում, առավել ընդգծելով, կարևորելով և հստակեցնելով դրանց մշակման գործընթացները:

Սակայն նշված նկատառումները չեն ստվերում կատարված հետազոտական աշխատանքի գիտական արժեքն ու նշանակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ֆրիդա Հմայակի Հակոբյանի <<Մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորման և զարգացման ուղղությունները Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտում>> թեմայով ատենախոսությունը գիտամանկավարժական արժեքավոր հետազոտական աշխատանք է, այն կարևոր է ՀՀ կրթության ոլորտի զարգացման, մանկավարժական գիտության արդի տեսության և պրակտիկայի համար:

Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2021 թվականի 8 ապրիլի մանկավարժության ամբիոնի թիվ 10 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, Ս. Սողոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, մանկ. գիտ. թեկնածու Լ. Միքաելյանը, Ա. Յայլոյանը, Ն. Գրիգորյանը, Շ. Ալեքսանյանը, բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ի. Շուխյանը, Լ. Բաղդասարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ: ՇՊՀ-ի գիտքարտուղար Կ. Պետրոսյան